

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**“ՄԹՆՈՒՐՈՐՏԱՅԻՆ ՕՂԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ” ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈՂՎԱԾ 1. “Մթնոլորտային օդի պահպանության մասին” Հայաստանի Հանրապետության 1994 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-121 օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

**“ՀՈՂՎԱԾ 1. ՄԹՆՈՒՐՈՐՏԱՅԻՆ ՕՂԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ**

“Մթնոլորտային օդի պահպանության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի կարգավորման առարկան է՝ մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումը:

Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի պահպանության հարցերը կարգավորվում են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով:”

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

“ՀՈՂՎԱԾ 2. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. մթնոլորտ՝ երկիր մոլորակը շրջապատող գազային թաղանթ, որի ստորին սահմանը շփվում է երկրի ջրային և ցամաքային մակերեսին և տարածվում մինչև մերձերկրային տիեզերական տարածություն,

2. մթնոլորտային օդ՝ բնական միջավայրի բաղադրամաս, որն իրենից ներկայացնում է մթնոլորտը կազմող գազերի բնական խառնուրդ և գտնվում է բնակելի, արտադրական և այլ տեսակի շենքերից դուրս,

3. վնասակար ներգործություն՝ մթնոլորտային օդի վրա վնասակար նյութերի արտանետումների և վնասակար ֆիզիկական ներգործություն,

4. աղտոտող (վնասակար) նյութ՝ քիմիական կամ կենսաբանական նյութ, կամ այդպիսի նյութերի խառնուրդ, որը առկա է մթնոլորտային օդում, և որը որոշակի կոնցենտրացիաների դեպքում վնասակար ազդեցություն է ունենում մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա,

5. մթնոլորտային օդի աղտոտում՝ մթնոլորտային օդ թափանցած կամ այնտեղ առաջացած աղտոտող /վնասակար/ նյութեր, որոնք հանգեցնում են մթնոլորտային օդում այդ նյութերի բնական մակարդակի գերազանցում,

6. մթնոլորտային օդի վրա վնասակար ֆիզիկական ներգործություն՝ աղմուկի, վիբրացիայի, իոնիզացնող ճառագայթման, ջերմային, և այլ ֆիզիկական գործոնների վնասակար ազդեցություն, որի հետևանքով կարող են փոփոխվել մթնոլորտային օդի ջերմային, էներգետիկական, ալիքային, ռադիոակտիվ և այլ ֆիզիկական հատկությունները՝ ազդելով մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա,

7. օդերևութաբանական անբարենպաստ պայմաններ՝ օդերևութաբանական պայմաններ, որոնք նպաստում են վնասակար նյութերի կուտակմանը մթնոլորտի գետնամերձ շերտում,

8. արտանետման աղբյուր՝ տեխնոլոգիական սարքավորում կամ օբյեկտ, որից վնասակար /աղտոտող/ նյութն անջատվում և արտանետվում /թափանցում/ է մթնոլորտային օդ,

9. արտանետման անշարժ աղբյուր՝ որոշակի տարածքում ամրակայված անփոփոխ տարածական դիրքով կազմակերպված և անկազմակերպ արտանետման աղբյուր,

10. արտանետման շարժական աղբյուր՝ տարածական տեղադիրքը փոփոխող արտանետման աղբյուր,

11. մթնոլորտային օդի մոնիթորինգ (կամ դիտանց)՝ մթնոլորտային օդի վիճակի, նրա բաղադրության և նրանում կատարվող բնական երևույթների, ինչպես նաև մթնոլորտային օդի աղտոտվածության,

մթնոլորտի վրա ֆիզիկական ներգործությունների դիտարկման, գնահատման և ուսումնասիրության գործընթաց,

12. մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիա (խտություն)՝ մթնոլորտային օդում աղտոտող առանձին նյութի այն առավելագույն կոնցենտրացիան, որը չգերազանցելու դեպքում այդ նյութը ուղղակիորեն կամ անուղղակի ձևով ներգործելիս բացասական ազդեցություն չի գործում մարդու առողջության և բնական ու մարդածին շրջակա միջավայրի վրա սույն օրենքի իմաստով,

13. սահմանային թույլատրելի արտանետում՝ արտանետում, որի հետևանքով արտանետված աղտոտող /վնասակար/ նյութի գետնամերձ կոնցենտրացիան չի գերազանցում տվյալ նյութի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան,

14. մթնոլորտային օդի վրա սահմանային թույլատրելի վնասակար ֆիզիկական ներգործության նորմատիվ՝ նորմատիվ, որի դեպքում վնասակար ֆիզիկական ներգործությունը չի հանգեցնում մթնոլորտային օդի վրա ֆիզիկական վնասակար ներգործության սահմանային թույլատրելի մակարդակի գերազանցմանը,

15. մթնոլորտային օդի վրա ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակ՝ մթնոլորտային օդի վրա վնասակար ֆիզիկական ներգործության այն առավելագույն մակարդակը, որի դեպքում այդ ներգործությունը բացասական ազդեցություն չի գործում մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա,

16. լավագույն հասանելի տեխնոլոգիա՝ գիտատեխնիկական ժամանակակից նվաճումների վրա հիմնված արտադրական տեխնոլոգիական լուծումներ, գործընթացներ և ռեժիմներ, որոնք հաստատել են իրենց գործնական կիրառելիությունը և որոնց կիրառումը նպաստում է բնական ռեսուրսների խնայողաբար օգտագործմանը և շրջակա միջավայրի վրա (մթնոլորտ, ջրային օբյեկտներ, հողային ծածկույթ, կենսոլորտ) վնասակար ներգործության նվազեցմանը,

17. մթնոլորտի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործություն՝ մթնոլորտի բնական վիճակի, եղանակի, նրանում ընթացող պրոցեսների բնական ընթացքը փոփոխելու նպատակով իրականացվող արհեստական ներգործություն, որը կատարվում է համապատասխան համակարգերի, կայանքների, սարքերի, քիմիական ռեագենտների և այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ,

18. օդի պահանջվող օգտագործում՝ մաքուր օդի այն ծավալը, որը անհրաժեշտ է աղտոտող նյութերի արտանետումները մինչև սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների մակարդակը նոսրացնելու համար,

19. աղտոտման աղբյուրների խումբ՝ որոշակի տարածքում տեղաբաշխված 1-ից ավելի անշարժ աղբյուրներ, որոնցից արտանետվող վնասակար նյութերի վերադրման հետևանքով մթնոլորտի գետնամերձ շերտում ձևավորվում է միասնական աղտոտում:

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի 5-րդ հոդվածից հանել

“- մթնոլորտային օդի վիճակի դիտանցի (մոնիթորինգ) կազմակերպումը,

- մթնոլորտային օդի պահպանության կարգի սահմանումը,
- մթնոլորտային օդի աղտոտման համար վարձի սահմանումը” բառերը:

ՀՈՂՎԱԾ 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակության 5.1-5.2 հոդվածներով

ՀՈՂՎԱԾ 5.1 ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԹՆՈՒՐՏԱՅԻՆ ՕՂԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

«Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում լիազորված մարմինների իրավասություններն են. -մթնոլորտային օդի պահպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության մշակումը,

-մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

-արտանետումներ կատարելու հայտ ներկայացրած կազմակերպություններին մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների չափաքանակների տրամադրումը,

-մթնոլորտային օդի պահպանության նորմատիվամեթոդական փաստաթղթերի ձևավորումը,

-մթնոլորտային օդն աղտոտող նյութերի և արտանետումների պետական հաշվառումը,

-մթնոլորտային օդի վիճակի մոնիթորինգի (դիտանցի) կազմակերպումը և վարումը,

- իր իրավասությունների սահմաններում միջազգային համագործակցության իրականացումը,

-օրենքով սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

ՀՈՂՎԱԾ 5.2 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՅՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում տարածքային կառավարման պետական մարմինների իրավասություններն են.

- մարզերի բնապահպանական ծրագրերի կազմում մթնոլորտային օդի պահպանության բաղադրիչի մշակումը և իրականացման ապահովումը,
- մարզերի ագլակիր համայնքներում միջհամայնքային համագործակցության կազմակերպումը,
- օդերևութաբանական անբարենպաստ պայմաններում մարդու կյանքի ու առողջության սպառնալիքների վերացմանը ուղղված միջոցառումների իրականացումը:

ՀՈՂՎԱԾ 5. Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

ՀՈՂՎԱԾ 6. Օրենքի 13-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

“ ՀՈՂՎԱԾ 13. ՄՅՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕՐՆ ԱՐՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄՅՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕՐԻ ՎՐԱ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎՆԱՍԱԿԱՐ ՆԵՐՔՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՍԱԶԲՈՒՆՔԸ

Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և մթնոլորտային օդի վրա սահմանային թույլատրելի ֆիզիկական վնասակար ներգործությունների նորմատիվները սահմանվում են այնպես, որպեսզի, հաշվի առնելով տվյալ տարածաշրջանի զարգացման հեռանկարները, տվյալ տարածքից և այլ տարածքներից աղտոտող նյութերի արտանետումները և ֆիզիկական վնասակար ներգործությունները չհանգեցնեն մթնոլորտային օդում աղտոտվող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների գերազանցմանը:

Սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվները սահմանվում են այն արտանետման աղբյուրների կամ դրանց խմբերի համար, որոնց արտանետումների առավելագույն նախագծային ցուցանիշների հիման վրա հաշվարկված օդի պահանջվող օգտագործումը մեկ տարում` գերազանցում է երկու միլիարդ խորանարդ մետր չափանիշը կամ վարկյանում` գերազանցում է երկու հազար խորանարդ մետր չափանիշը:

Արգելվում է մթնոլորտի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործությունները որոնց համար սահմանված չեն համապատասխան նորմատիվներ:

Մթնոլորտի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործությունները, իրականացվում են ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով :

ՀՈՂՎԱԾ 7. Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

“ՀՈՂՎԱԾ 14. ԱՐՏՈՏՄԱՆ ԱՆՇԱՐԺ ԱՐՔՈՒՐՆԵՐԻՑ ՄՅՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕՐՆ ԱՐՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Աղտոտման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվները ընդունվում կամ մերժվում են լիազորված մարմնի կողմից` ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով` աղտոտման անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպությունների կողմից դիմելու օրվանից 30 օրվա ընթացքում: Սույն կետով սահմանված ժամկետում լիազորված մարմնի կողմից պատասխան չտալու դեպքում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվը համարել ընդունած:

ՀՈՂՎԱԾ 8. Օրենքի 15-րդ հոդվածում “աշխատանքը” բառից հետո լրացնել “ հետևողականորեն բարելավել տեխնոլոգիական պրոցեսները, ներդնելով լավագույն հասանելի տեխնոլոգիաներ” բառերը և “(մոնիթորինգ)” բառը հանել:

ՀՈՂՎԱԾ 9. Օրենքի 16-րդ հոդվածում «իրավունք ունեն» բառերը փոխարինել “օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են” բառերով:

ՀՈՂՎԱԾ 10. Օրենքի 14-րդ, 16-րդ, 19-րդ, 34-րդ, 39-րդ և 41-րդ հոդվածներում “հատկապես լիազոր պետական” բառերը, իսկ 21-րդ և 30-րդ հոդվածներում “հատկապես լիազորված” բառերը փոխարինել “լիազոր” բառով:

ՀՈՂՎԱԾ 11. Օրենքի 20-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

“ ՀՈՂՎԱԾ 20. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՕՂԵՐԵՎՈՒԹՅԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՔԱՐԵՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՄ ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕՂԻ ԱՅՆՊԻՍԻ ՎԻՃԱԿԻ ԴԵՊՔՈՒՄ, ՈՐԸ ՄՊԱՌՆՈՒՄ Է ՄԱՐԴԱՆՑ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԿՅԱՆՔԻՆ

Կանխատեսվող օգերևութաբանական անբարենպաստ պայմաններում, երբ մթնոլորտային օդում սպասվում է աղտոտող նյութերի քանակի մեծացում, մթնոլորտային օդն աղտոտող օբյեկտներ ունեցող կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարում են արտանետումների նվազեցման միջոցառումներ:

Եթե օգերևութաբանական անբարենպաստ պայմաններում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների և մթնոլորտային օդի վիճակի վրա այլ վնասակար ներգործությունների անբարենպաստ զուգորդության հետևանքով առանձին շրջաններում սպառնալիք է առաջանում մարդկանց կյանքի և առողջության համար, մթնոլորտային օդն աղտոտող օբյեկտներ ունեցող կազմակերպությունները և շրջակա միջավայրի աղտոտման նկատմամբ հսկողության և վերահսկողության ծառայությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում են մարդու կյանքի ու առողջության սպառնալիքների վերացմանը նպատակաուղղված ազդարարման ու արձագանքման միջոցառումներ:

ՀՈՂՎԱԾ 12. Օրենքի 40-րդ հոդվածում “իսկ կողմերի անհամաձայնության դեպքում` դատարանը կամ պետական արբիտրաժը” բառերը փոխարինել “իսկ անհամաձայնեցման դեպքում` դատարանը” բառերով:

ՀՈՂՎԱԾ 13. Օրենքի 4-րդ, 6-8, 33 և 38 հոդվածները ուժը կորցրած ճանաչել:

ՀՈՂՎԱԾ 14. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին քննարկմամբ քննարկված “Մթնոլորտային օդի պահպանության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների և ՀՀ կառավարության կողմից արված առաջարկությունների

h/h	Առաջարկության հեղինակը	Հոդվածի համարը	Առաջարկության բովանդակությունը	Ծանուցում
1	2	3	4	5
“Մթնոլորտային օդի պահպանության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենքի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից արված առաջարկությունները				
1	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	Նախագծի 1-ին հոդված	«նոյեմբերի 1-ի» բառերը փոխարինել «հոկտեմբերի 11-ի» բառերով, 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ “Մթնոլորտային օդի պահպանության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի կարգավորման առարկան է՝ մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումը”:	Ընդունված է
2	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	2-րդ հոդվածի 2-րդ կետ	Կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ “մթնոլորտային օդ՝ բնական միջավայրի բաղադրամաս, որն իրենից ներկայացնում է մթնոլորտը կազմող գազերի բնական խառնուրդ և գտնվում է բնակելի, արտադրական և այլ տեսակի շենքերից դուրս”:	Ընդունված է
3	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	2-րդ հոդվածի 3-րդ կետ	Կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ “վնասակար ներգործություն՝ մթնոլորտային օդի վրա վնասակար նյութերի արտանետումների և վնասակար ֆիզիկական ներգործություն”:	Ընդունված է
4	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	2-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետեր	Կետերը միացնել՝ “աղտոտող /վնասակար նյութ/՝ քիմիական կամ կենսաբանական նյութ կամ այդ նյութերի խառնուրդ, որը որոշակի կոնցենտրացիաների դեպքում առկա է մթնոլորտային օդում, վնասակար ազդեցություն է ունենում մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա”	Ընդունված է հետևյալ շարադրմամբ՝ “աղտոտող (վնասակար) նյութ՝ քիմիական կամ կենսաբանական նյութ, կամ այդպիսի նյութերի խառնուրդ, որը առկա է մթնոլորտային օդում, և որը որոշակի կոնցենտրացիաների դեպքում վնասակար ազդեցություն է ունենում մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա”

5	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	2-րդ հոդվածի 6-րդ կետ	“աղտոտող” բառից առաջ ավելացնել «/վնասակար/» բառը:	Ընդունված է
6	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	2-րդ հոդվածի 7-րդ կետ	կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ “մթնոլորտային օդի վրա վնասակար ֆիզիկական ներգործություն՝ աղմուկի, վիբրացիայի, իոնիզացնող ճառագայթման, ջերմային, և այլ ֆիզիկական գործոնների վնասակար ազդեցություն, որի հետևանքով կարող են փոփոխվել մթնոլորտային օդի ջերմային, էներգետիկական, ալիքային, ռադիոակտիվ և այլ ֆիզիկական հատկությունները՝ ազդելով մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա:”	Ընդունված է
7	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	2-րդ հոդվածի 9-րդ կետ	կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ “արտանետման աղբյուր՝ տեխնոլոգիական սարքավորում կամ օբյեկտ, որից վնասակար /աղտոտող/ նյութն անջատվում և արտանետվում /թափանցում/ է մթնոլորտային օդ”:	Ընդունված է
8	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	2-րդ հոդվածի 14-րդ կետ	“միջնորդավոր” բառը փոխարինել “անուղղակի”:	Ընդունված է
9	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	2-րդ հոդվածի 15-րդ կետ	կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ “սահմանային թույլատրելի արտանետում՝ արտանետում, որի հետևանքով արտանետված աղտոտող /վնասակար/ նյութի գետնամերձ կոնցենտրացիան չի գերազանցում տվյալ նյութի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան”:	Ընդունված է
10	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	2-րդ հոդվածի 16-րդ կետ	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ “մթնոլորտի վրա սահմանային թույլատրելի վնասակար ներգործության նորմատիվ՝ նորմատիվ, որի դեպքում վնասակար ֆիզիկական ներգործությունը չի հանգեցնում մթնոլորտի վրա ֆիզիկական վնասակար ներգործության սահմանային թույլատրելի մակարդակի գերազանցմանը”:	Ընդունված է հետևյալ շարադրմամբ՝ “մթնոլորտային օդի վրա սահմանային թույլատրելի վնասակար ֆիզիկական ներգործության նորմատիվ՝ նորմատիվ, որի դեպքում վնասակար ֆիզիկական ներգործությունը չի հանգեցնում մթնոլորտային օդի վրա ֆիզիկական վնասակար ներգործության սահմանային թույլատրելի մակարդակի գերազանցմանը”
11	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	2-րդ հոդվածի 17-րդ կետ	կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ “մթնոլորտի վրա ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակ՝ մթնոլորտի վրա վնասակար ֆիզիկական ներգործության այն առավելագույն մակարդակը, որի	Ընդունված է հետևյալ շարադրմամբ՝ “մթնոլորտային օդի վրա ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակ՝ մթնոլորտային օդի վրա վնասակար ֆիզիկական ներգործության այն առավելագույն

			ներգործությունը բացասական ազդեցություն չի գործում/թողնում մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա”:	մակարդակը, որի դեպքում այդ ներգործությունը բացասական ազդեցություն չի գործում մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա”
12	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	2-րդ հոդվածի 10-րդ, 22-րդ և 23-րդ կետերը:	կետերը հանել	Ընդունված է
13	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	2-րդ հոդվածի 19-րդ կետ	“ներգործության” բառը փոխարինել “ներգործություն” բառով:	Ընդունված է
14	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	4-րդ հոդված	Հոդվածի “տարածքային կառավարման մարմինների իրավասությունները մթնոլորտային օդի պահպանության բնագավառում” մասում լրացնել նոր ենթակետ. “օդերևութաբանական անբարենպաստ պայմաններում իրականացնում է մարդու կյանքի ու առողջության սպառնալիքների վերացմանը ուղղված միջոցառումներ”:	Ընդունված է
15	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	6-րդ հոդված	վերնագրում և տեքստում ավելացնել “մթնոլորտային օդի վրա” բառերը»:	Ընդունված է վերնագրի հետևյալ շարադրմամբ՝ “ՀՈՂՎԱԾ 13. ՄՅՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕՂՆ ԱՐՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄՅՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕՂԻ ՎՐԱ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՆԱՍԱԿԱՐ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔԸ”
16	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	6-րդ հոդված	1-ին պարբերությունում “տվյալ տարածքից ու մյուս բոլոր աղբյուրներից” բառերը փոխարինել “տվյալ տարածքի և այլ տարածքներից” բառերով:	Ընդունված է
17	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	7-րդ հոդված	Հոդվածում լրացնել հետևյալ նախադասությունը. “Սույն կետով սահմանված ժամկետում լիազորված մարմնի կողմից պատասխան չտալու դեպքում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվը համարել ընդունված”:	Ընդունված է
18	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	11-րդ հոդված	վերնագրում ավելացնել “ու կյանքին” բառերը»:	Ընդունված է
19	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	11-րդ հոդված	1-ին պարբերության “կազմակերպությունները” բառից առաջ ավելացնել “մթնոլորտային օդն աղտոտող օբյեկտներ ունեցող” բառերը, հանել “բնական” բառը:	Ընդունված է

20	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	14-րդ հոդված	“հրապարակման” բառից հետո ավելացնել “պաշտոնական” բառը:	Ընդունված է
“Մթնոլորտային օդի պահպանության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենքի վերաբերյալ ՀՀ նախարարությունների կողմից արված առաջարկությունները				
1.	ՀՀ կառավարություն	8-րդ հոդված	“ավելացնել” բառը փոխարինել “լրացնել” բառով	ընդունված է
		10-րդ հոդված	շարադրել հետևյալ խմբագրությամբ. “Օրենքի 14-րդ, 16-րդ, 19-րդ, 34-րդ, 39-րդ և 41-րդ հոդվածներում “հատկապես լիազորված պետական” բառերը, իսկ 21-րդ և 30-րդ հոդվածներում “հատկապես լիազորված բառերը” փոխարինել “լիազոր” բառով”	ընդունված է